**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «15-ը» մայիսի 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՉԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակիցների՝ մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Հայանտառ» ՊԱԿ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի՝

-ներկայացված փաստաթղթերում բացակայում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության* ***04.05.2011թ. N 526-Ն*** *որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի* ***44-րդ*** *կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

2.՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից ներկայացվելիք շտկումների քննարկման վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Ս. Աբովյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Հ. Բադալյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան

**15.05.2018թ.**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «17-ը» մայիսի 2018թ.

ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման և ընտրված մասնակցին որոշման մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման և ընտրված մասնակցին որոշման մասին**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Հայանտառ» ՊՈԱԿ-ի որակավորման հատկանիշները և ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/2» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող(ԳԱՊ)** Ս. Աբովյան

**Գնահատող** Ա. Պապյան

**Գնահատող** Հ. Բադալյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնումները համակարգող՝** Ռ. Մարդոյան